



with financial support of the Russian Federation



Empowered lives. Resilient nations.

Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի հանրային և մասնավոր հատվածի ներկայացուցիչները ծանոթացան ISO 50001 ստանդարտին

Երևան, 2018-ի նոյեմբերի 21-ին. «ԻՍՕ 50001:2018. նոր հնարավորություններ էներգետիկ համակարգերի կառավարման զարգացման համար» թեմայով դասընթացը նոյեմբերի 19-21-ը Երևանում միավորել էր 35 մասնակցի Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի հանրային և մասնավոր հաստատություններից: Դասընթացը կազմակերպել էր «Եվրասիական տնտեսական միության երկրներում էներգիայի արդյունավետության խթանման կարգավորող շրջանակ» տարածաշրջանային ծրագիրը (ֆինանսավորվում է Ռուսաստանի Դաշնության և իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի հայաստանյան գրասենյակի կողմից) «**Բիզնես-Դիալոգ**» ՓԲԸ հետ համատեղ:

Դասընթացի նպատակն էր մասնակիցներին զինել 50001:2018 միջազգային ստանդարտի վերաբերյալ գիտելիքներով՝ մասնավորապես ձևափոխված պահանջների և գործնական կիրառման դեպքերի օրինակով: ԻՍՕ 50001-ն աջակցում է հանրային և մասնավոր կառույցներին էներգետիկ կառավարման համակարգերի ներդրման միջոցով առավել արդյունավետ օգտագործել էներգա-ռեսուրսները:

«Շատ կարևորում ենք նման սեմինարները՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և էներգաարդյունավետության ներուժը, որը հասնում է մինչև 35%: Դա շատ լուրջ ցուցանիշ է, քանի որ մենք խնդիր ունենք էժան էլեկտրաէներգիայի աղբյուրների և այդ 30-35%-ը մեր որոնած էժան էլեկտրաէներգիան է: Միաժամանակ այդ ցուցանիշը հուշում է, որ դաշտում դեռևս քիչ բան է արված և Հայաստանում էներգաարդյունավետության բարձրացման ուղղությամբ լուրջ աշխատանքի անհրաժեշտություն կա», - նշեց ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Տիգրան Արզումանյանը:

Ղրղզստանի արդյունաբերության, էներգետիկայի և հանքարդյունաբերության պետական կոմիտեի նախագահի խորհրդական Մարատ Չոլպոնկուլովն ընդգծեց Ղրղզստանում ստանդարտի ներդրման կարևորությունը: Նա կարծիք հայտնեց, որ ավելի լայն խմբեր պետք է ներգրավեն նմանատիպ սեմինարներում՝ ավելացնելով, որ մտավախություն կար թեմայի բարդության առնչությամբ, սակայն դրա յուրացումը հեշտ էր ոլորտում երկար տարիների փորձ ունեցող դասընթացավարի օգնությամբ:

Ոլորտում Ղազախստանի փորձով կիսվեց Ղազախստանի Հանրապետության ներդրումային և զարգացման նախարարության էներգախնայողության և էներգախնայողության դեպարտամենտի գլխավոր փորձագետ Ժանարա Տամբաևան, ով նշեց, որ ISO 50001 ստանդարտի մասին դասընթացին Ղազախստանի ներկայացուցիչների մասնակցությունը տեղին է, քանի որ պլանավորվում է մինչև 2020 թվականը նվազեցնել երկրի էներգետիկ սպառումը մինչև 25% և ստանդարտի ներդրումը շատ կարևոր է այդ նպատակին հասնելու համար:

Թեմայի կարևորությունն ընդգծեց նաև Նովոգրուդոկի (Բելառուս) քաղաքապետարանի շրջակա միջավայրի կառավարման վարչության գլխավոր մասնագետ Ելենա Պերկոն՝ նշելով. «Մենք մշակում ենք կայուն էներգիայի (ներառյալ կլիմայի բաղադրիչը) զարգացման գործողությունների ծրագիր, որը սերտորեն կապված է այս ստանդարտի հետ, ուստի այն շատ կարևոր է մեզ համար»:

Դասընթացի մասին տեսանյութը հասանելի է «Բիզնես-Դիալոգ» ՓԲԸ YouTube ալիքով (youtu.be/mbimO_12Wf8):